

ՔԱՐԱ-ԿՐԱ-ԲԵՏՈՆԱԿՈՒՌ ՕՂԱԿԻ ՄԱՍԻՆ

Թ. Թորամանյանը այդ օղակի մասին հիշում է նախ իր անդրանիկ «Զվարթնոց եկեղեցին» հոդվածում. «Այսպես հաջորդաբար ձգված ութ գորեղ աղեղներ իրենց մեկ ծայրին հենակետ ունենալով արծվախոյակները, մյուս ծայրին սյունազարդի միջին սյուները կապող կամարները, տվեր են բոլորովին հաստատուն բոլորակ պատվանդան մը դրսի պատեն մեկնող կամարին և միանգամայն զուգահեռական դրսի պատին»¹:

Նույն տեղում Թորամանյանը շարունակում է. «Այս վերջին զուգահեռական կլորությամբ հավասարապես բարձրացած էր երկրորդ պատ մը, որը իբր պատվանդան ունեցեր է չորս անջատ արծվախոյակ կրող սյուները իրարու միացնող աղեղներու միջոցով կազմված օղակը և հավանաբար, այս պատը ոչ թե գոց, այլ սյունազարդ մը եղած ըլլալու է»²:

Զվարթնոցի համար վերակազմության առաջարկով հանդես եկող Ս. Մնացականյանը օղակաձև ծածկի մասին գրում է իր «Զվարթնոցի վերակազմության նոր նախագիծը»³ աշխատության սկզբի էջերում հետևյալ ձևով. «Տաճարի կենտրոնական մասը շրջանցող օղակաձև սրահը ծածկված է եղել կրկնակի կորություն ունեցող թաղով, որը մի կողմից հենվել է տաճարի շրջանաձև պատի վրա, իսկ մյուս կողմից՝ մեծաթռիչք, կրկնակի կորություն ունեցող թաղերի միջոցով կազմված օղակաձև հենապատի վրա»:

Վերոհիշյալ օղակաձև պատվանդանը, համաձայն Թորամանյանի, իր վրա կրել է բացի առաջին հարկի օղակաձև սրահի ու նաև վերնահարկի երկկոր թաղածածկերի կեսից, նաև տաճարի երկրորդ աստիճանի արտաքին բոլորակ պատի ողջ ծանրությունը, որը վերնահարկի սահմաններում եղել է սյունազարդ, երկրորդ աստիճանի սահմաններում՝ բազմաթիվ պատուհանների բացվածքներով, ինչպես և վերևում

¹ Թ. Թորամանյան, Զվարթնոց, Գազկաշեն, Երևան, 1984, էջ 29:

² Նույն տեղում, էջ 30:

³ Ս. Խ. Մնացականյան, Զվարթնոցի վերակազմության նոր նախագիծը (Հայկական ՍՍՌԻ ԳԱ Տեղեկագիր – հասարակական գիտություններ, N 9, 1959), էջ 55:

գտնվող փոքր խորշերի ծածկերի ծանրության կեսը: Ինչպես տեսնում ենք հիշյալ բոլորակ հենարանը իր վրա կրել է հազարավոր տոննա քաշ ունեցող բեռ:

Ս. Մնացականյանի վերակազմության համաձայն օղակաձև հենապատը ստեղծվել է միայն ու միայն տաճարի միակ՝ բոլորակ սրահի ծածկի թաղով ծածկելը հնարավոր դարձնելու և նրա կեսի ծանրությունը կրելու համար (այս նախագծում վերնահարկ չկա, ինչպես և տաճարի երկրորդ աստիճանը արտաքին բոլորակ պատ չունի):

Ակամայից հարց է առաջանում, թե արդյոք այդ մի թաղի կեսի ծանրությունը կրելու համար հնարավոր չէ՞ր մի ավելի թեթև միջոց ստեղծել, փոխանակ այնպիսի մի հենարանի աստեղծումը, որը ի վիճակի էր շատ ավելի մեծ բեռ կրելու: Բավական է հիշեցնել, որ օղակաձև հենարանը, իր որոշ մասերում ուներ մոտ 6.5 մետր բարձրություն, ամենափոքր բարձրությունը հասնում էր 2.75 մետրի:⁴

⁴ Տ. Մարության, Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ, Երևան, 1963, էջ 71: